հայկական տիպար էր. յոյժ ախորժելի և անմոռանալի զգացմամբ տրոփեց սիրտս, երբ Ս. Լուսաւորիչ փողոցէն առաջ գնալով՝ յանուն Սրբոյն կանգնած հոյակապ եկեղեցին դիմացս ելաւ, 'ի ճակատուն կրելով ազգիս լուսատուին վայելչանկար պատկերը, անհրաժեշտ Տրդատ Թագաւորն Հայոց՝ առաջի Սրբոյն ծնրադիր։

Անցեալ տարի աշնան, օգոստոս 20, Փոտոլեան գաւառին մէջ հայաչէն Կամենից քաղաքը մտնելու միջոցիս, բոլորովին տարբեր զգացումն կրած էի, քան ինչ որ այժմ զգացի. հոն քարակարկառ երկյարկ բերդի դռնէն կ'անցնէի Հայոց քաղաքը մտնելու համար, իսկ աստ անբերդ և անդուռն՝ հայութեամբ կենդանի քաղաքին մէջ ազատ կը շնչէի. հոն ինչպէս եղանակն աշնան, նոյն և ազգիս աչունը կամ ձմեռը պիտի տեսնէի, իսկ աստ՝ ազգս գարնան վիճակի մէջ, ուր էր թէ երկայն լինէր այդ գարունը, և երկարագոյն ևս ամառն յաջորդէր նմա։ Երկու քաղաքներս ևս Անեցի հայկազանց չէնք, օտար աշխարհաց մէջ՝ մին ԺԴ դարուն չէնք, քարաշէն պատեր չորս կողմը, որոց պտոյտը ջրալիր խրամ, որպէս զի թշնամին ազատ մուտք չգտնէ, մինչ երկրորդս ազատ յահէ թշնամւոյն, անպարիսպ և անխրամ ԺԸ դարուն վերջերը շինուած։ Առաջնոյն մէջ Հայկազունք երկար տարիներ իրենց դերը փառաւոր կերպով խաղալէն վերջը՝ քաշուել են, Իսրայելի[1] որդւոց թողով թատրը, իսկ աստանօր նոր կը սկսին ազ-

1. Այժմ Կամենիցի վաճառականութիւնը Հրէից ձեռքն է՝ մինչդեռ երբեմն Հայոց ձեռքն էր ինչպէս քաղաքին, նոյնպէս և աշխարհին վաճառականութիւնն։